

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻԻՆ

## ՄՇԱԿ

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զինքով և նոյն պրոպագանդայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ:  
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատան (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում) Թամարայի տանը:  
Կայսրութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս ենք վարվում մեր գործընկերները հետ.—  
ՆԵՐՔԵԱՐԹԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ բաժնուկից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ.—ԲՈՐՍՍ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անարկներ.

#### ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՎԱՐՎՈՒՄ ՄԵՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Ներկայ հոկտեմբերի 27-ին Թիֆլիսից 6 վերստ հեռու գտնվող Շալվաի գիւղում վախճանվեց 82 տարեկան հասակում կարապետ վարժապետ Բէլախեանց:  
Հանգուցեալը ծնվեց Գանձակ քաղաքում և ուսման ծարաւը զգալով Թիֆլիսի հայրական տունը և ուղևորվեց Գ. Պօլիս, ուսում առնելու: Ապա նա ութ տարի շարունակ վարժապետութիւն արաւ Եփրատի սի կայրէ քաղաքի հայոց դպրոցում: Զր նայելով որ դործը լաւ էր գնում Եփրատի սի, Բէլախեանց վերադառնում է Անդրկովկաս քաղաքներում և զետեղվելով Թիֆլիսում, նուիրում է այստեղ իր ոյժերը դպրոցական գործին:

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԱԿՆԱՐԿՆԵՐ

Կանանց հարցը.—Մեր գրականութիւնը և կանանց հարցը.—Հայ կնոջ ուսումնասիրութիւնը.—Իրաւ ճանապարհորդ Նիխեիլի կարծիքը հայ կնոջ մասին.—Էնցիկլոպիդիա Գիգորի կարծիքը և կնոջ քննադատութիւնը:

Մեր քաղաքակրթված համարվող դարու առաջ բերած կարևոր հարցերից մէկն էլ.—կանանց հարցն է, որը թէ մօտիկ անցեալում, թէ ներկայում, և անկասկած ապագայում էլ, բաւական աչքի ընկնող տեղ պէտք է բռնէ սօցիալական կնճառոտ խնդիրների շարքում:

Կանանց հարցը իր գլխաւոր պահանջներով այժմ համարեալ թէ հանրաժանութի և եւրոպական հասարակութիւնների մէջ: Այնտեղ այդ հարցը ունի իր անցեալը, նա ունի պատմութիւն սկսած հինց այն րօպէից, երբ հրապարակ դուրս եկաւ կանանց էմանսիպացիոյ խնդիրը: Եւրօպան և Նոր-Ալիսարհը ունեն ամբողջ գրականութիւն այդ հարցի մասին, և այդ գրականութիւնը ունեցել է և ունի աշխարհահռչակ ներկայացուցիչներ և կանանց հարցի տաղանդաւոր պաշտպաններ, սկսած Միլլից և ամենաարմատական ընկերութիւններից մինչև Կլանանց էմանցիպա-

Պէտք է յիշել թէ ինչ գրական մէջ էր Թիֆլիսի հայոց հասարակութիւնը քառասուններորդ թիւականներում: Վրացական հայերը մոռացել էին իրանց մայրենի լեզուն, և առհասարակ ձգտումը դէպի կրթութիւնը շատ անշնան էր: Բէլախեանց Թիֆլիս վերադառնալով անմիջապէս հիմնում է մի փոքրիկ դպրոց Ներսէս Միթոյանութեամբ և ամեն կողմից սկսում են հաւաքվել նրա մօտ աշակերտներ:

Բազմաթիւ հայեր, որոնք այս րօպէիս դէպ են խաղում մեր հասարակութեան մէջ, որպէս փաճառականներ, իրաւաբաններ, բժիշկներ և այլն, պարտական են հանգուցեալ Բէլախեանցին ոչ թէ միայն իրանց տարրական ուսումով, այլ և առհասարակ իրանց բարձրագոյն կրթութեամբ և իրանց այժմեան դիւրով: Հինց որ երեկանք թէ շատ ընդունակ էր երեւում, կարողանալ վարժապետը անմիջապէս սկսում էր համոզել նրա ծնողներին, ազգականներին, կամ որ և է բարեբախտ որ երեկային ուղարկեն Մոսկվայի Լազարեան ճեմարանը, կամ ուրիշ տեղ: Հինց որ տեսնում էր մի ընդունակ պատանուն, համարում էր ազգականներին կամ բարեբախտներին համալսարան ուղարկել յիշեալ պա-

ցիայի վերջին սիրահարները, որոնք նոյնքան անկեղծութեամբ են վերաբերվում դէպի կանանց հարցը, որքան միջնադարեան Փրանսիական ասպետները դէպի իրանց հանրաժանութիւնը:

Սօցիալական շատ խոր նշանակութիւն ունեցող այդ խնդրի վերաբերութեամբ Եւրօպայում առաջ եկած մտաւոր փոփոխւելները մի այնպիսի ալեկոծութիւն առաջ բերեցին, որ Կլանանց հարցը մտածեց գտաւ նոյն իսկ հայոց գրականութեան և մամուլի մէջ էլ, չէ նայած որ մեր ժողովուրդը, իբրև Ասիայի ժողովուրդ, ոչ մի հարցում գուցէ այնքան պահպանողական չէ, որքան այդ հարցում:

Տարաբաղդաբար մեր գրականութեան մէջ տարիների ընթացքում այդ հարցը առանձին ոյժեր չէ գրաւել դէպի ինքը: Գրա վերաբերութեամբ նոյն իսկ այժմ էլ մեր գրականութեան մէջ չունենք փոքր ի շատե աչքի ընկնող աշխատութիւններ, չունենք նոյն իսկ օտար գրականութեան մէջ այդ հարցի վերաբերութեամբ յայտնի աշխատութիւնների թարգմանութիւնը:

Կանանց հարցը արծարծվել է մեր մամուլի և մեր գրականութեան մէջ ընդհանուր կերպով, առանց պարզելու և բացատրելու այն գիտական և սօցիալական հիմքերը, որոնց հիման վրա այսօր պրօպօգանդա է լինում իրական սեռի էմանցիպացիայի մասին, իսկ այն կապը, որ կայ կանանց հարցի և տնտեսական հարցերի մէջ, որը և իսկապէս մի նոր շրջան է բաց արել այդ հարցի համար, նրա նախնի մօղայական ուղիները աւելի խոր և ծանրաշիջու կերպարանք տալով.—բոլորովին ծանօթ չէ մեր հասարակու-

տանուն: Բազմաթիւ հայեր, որոնք այժմ նշանաւոր դիրք ունեն մեր հասարակութեան մէջ, պարտական են հանգուցեալ Բէլախեանցին ոչ թէ միայն նրանով որ տարրական ուսում են ստացել, մայրենի լեզու են սովորել և նրա դրամամբ միջնակարգ դպրոց են արվել,—բայց պարտական են նրան որ մարդ են դարձել:

Բայց ինչպէս են վարձատրել նրան, այդ օգտաւէտ հասարակական գործիչին, այն մարդկանց մեծ մասը, որոնք պարտական են նրան ամեն բանով: Ահա ինչպէս:

Այն ժամանակ երբ Բէլախեանց մեզմօտ վարժապետութիւն էր անում, չէր կար Թիֆլիսում մի ուրիշ մասնաւոր ուսուցիչ, չէր կար բացի նրա դպրոցից մի այլ մասնաւոր դպրոց, ուրեմն պարզ է որ հանգուցեալը չունենալով ոչինչ մրցութիւն, բաւական նիւթական շահ պէտք է ունենար իր գործունէութիւնից: Եւ ճշմարիտ մի քանի տարուց յետոյ հանգուցեալը յետ դրած ունէր արդէն մի բաւական խոշոր գումար, մասնաւոր այն ժամանակները աչքի առջև ունենալով երբ փոքր աւելի թանգ էր, նա ունէր արդէն մօտ 8,000 ռուբլի առձեռն գումար: Բայց ահա սկսում են փոքր առ փոքր այլ և այլ համալսարանական քաղաքներից վերադառնալ նրա բարեբաղդած, իրանց համալսարանական ուսումնի աւարտած երիտասարդներ, մասնաւոր են կենսքը և դեռ ևս որ և է պաշտօն չը գտած իմանալով որ իրանց նախկին վարժապետը փող ունի, սկսում են նրան դիմել, նրանից հարկւր, երկու հարկւր, չորս հարկւր, հինգ հարկւր ռուբլիով փող ուղարկի: Բարեբախտ, մարդասէր և իղէալիստ Բէլախեանց անդադար տալիս է ու տալիս իր փողերը իր նախկին աշակերտներին, յոյս դնելով նրանց ազնիւ խօսքի վրա, որ երբ իրանց պաշտօն կը ստանան, փողն էլ կը դարձնեն... Այդպիսով ութ հազարի չափ իր ամբողջ խնայած գումարը անցաւ իր նախկին աշակերտների ձեռքը, որոնք բարեբաղդած էին նրանից,—և այդ ազնիւ համալսարանականներից այդ լծարքով ոյժերից ոչ մէկը այլ ևս երբեք չը վերադարձրեց համեստ գործիչին նրանից

Թեմանը: Ինչ և չը լինի, այդ հարցը, իբրև քաղաքակրթական շարժման մի արտայայտութիւն մեր մէջ էլ ունեցաւ իր պաշտպանները, գլխաւորապէս ազատամիտ ուղղութեան պատկանող կուսակցութեան մէջ, որոնք մի կողմից, թէ և սահմանափակ կերպով, ընդհանուր հարցը արծարծելով, միւս կողմից սկսեցին ուսումնասիրել հայ կնոջ լիճակը և դրութիւնը:

Թեմանը մեր պարբերական հրատարակութիւնները, գլխաւորապէս «Մշակը», և կը տեսնէր որ հայ կնոջ ուսումնասիրութեան գործին շատ երեսներ են նուիրված: Սակայն այդ խօսքերից իսկոյն չը պէտք է եղաւկացնել, որ այդ ուսումնասիրութեան գործը արդէն կատարված պոծած է: Ոչ, այդպիսի եղաւկացութիւն անելը շատ սխալ կը լինէր: Ընդհանրապէս մեր ժողովրդի կենսքի ուսումնասիրութեան գործը դեռ այնքան թերի է, որ հայ կնոջ դրութեան ուսումնասիրութիւնն էլ, իբրև երկրի և ժողովրդի ընդհանուր ուսումնասիրութեան մի մասը,—ունի իր շատ թերութիւնները, և դեռ երկար տարիներ պէտք է անցնեն, շատ ոյժեր պէտք է գործեն, և շատ հարկւր թերթեր պէտք է գրվեն, որպէս զի կարելի լինի ամբողջացնել կնոջ ուսումնասիրութեան գործը:

Ուրախալին միայն այն է, որ գործը սկսված է: Մի ժամանակ,—և այդ շատ հեռու չէ մեղաւնից,—այդ իբրև մասնաշաղկապ թերթի կամ պարբերի դարերը հարևան, չամօթ էր համարում խօսել Կլան-արմանքի մասին: Բայց այժմ այդ նոյն կնոջ մասին նա ոչ միայն խօսում է, այլ

փոքր առ փոքր վերցրած փողերով: Երեւութեանը հասած, հանգուցեալը յանձնեց իր դպրոցը իր օգնական Օրբէլ Օրբէլեանցին,—բայց սրանից էլ գրեթէ ոչինչ չէր ստանում: Դպրոցի եկամուտից իր ապրուստը հայթայթելու համար:

Եւ եթէ Թիֆլիսում ապրող հանգուցեալի աշակերտների մի խումբ, պ. Նիկողայոս Միրզոյեանցի նախաձեռնութեամբ չը կազմէին իրանց մէջ մի թուղթ, որի դրուութեամբ պարտաւորվեցան վերջին տարիները Շալվաի գիւղում յետին աղքատութեան մէջ ապրող կարապետ վարժապետին ամէն ամիս 40 ռուբլի տալ,—որդմէլին, որը այդքան արաւ Թիֆլիսի հայոց հասարակութեան համար, սոված կը մեռնէր:

Վերջին տարիները հանգուցեալը անդադար դիմում էր իր նախկին մի աշակերտին, որը բժիշկ է և կրկնում էր. «Բժիշկ ջան, դու կենալիս մէջ ինձ երկու անգամ քո դեղերով մահից ազատեցիր, հիմա տո՛ւր ինձ մի դեղ՝ որպէս զի մեռնեմ, որպէս զի այլ ևս ստիպված չը լինեմ մեռացիկանութեամբ ապրել, որպէս զի սիրտս և ուղեղս համալսարանի ու այլ ևս չը տեսնեմ ու չը զգամ մարդկանց ապերախութիւնը»:

Այդպէս ենք վարձատրում մենք մեր գործընկերներին: Հիմա որդմէլին բաղդաւոր է, նա հանգստացաւ, նա այլ ևս չէ զգում հայոց «Թարմ ոյժերի» ապերախութիւնը: Գ. Ա.

#### ՆԵՐՔԵԱՐԹԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Հոկտեմբերի 18-ին Որ Բաթումը ծովափնեայ քաղաք լինելով առաջ գնաւու շանսեր ունի, և որ ներկայումս էլ բաւական նշանաւոր տեղ է բռնում,—անկասկած ամենին յայտնի է. հինց այս նշանաւոր պայմաններն են պատճառ, որ այսօր Բաթումը գրաւում է դէպի Սև ծովի ափը ամեն կողմի և

և կարգում է, լսելով ամեն տեսակ կարծիքներ նրա ներկայի և ապագայի մասին:

Եւ հայ արեւելեան անթափանցելի չաղաքով ծածկված կենսքը բացվում է ուսումնասիրութեան համար, և այսօր մենք ուրախութիւն ունենք լսելու նոյն իսկ օտար ուսումնասիրողների և ճանապարհորդների կարծիքը արեւելի կնոջ մասին ընդհանրապէս և հայ կնոջ մասին մասնաւորապէս:

Այդպիսի ուսումնասիրութեան մի փորձ էլ նորերս երեւցաւ յայտնի ուսումնասիրող Ս. Նիխեիլի շնորհով, որի հետ և հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր հասարակութեանը: Ինչպէս յայտնի է, պ. Նիխեիլի մի երկու տարի առաջ ուստաց Աշխարհադարան ընկերութեան յանձնարարութեամբ ճանապարհորդեց մեր երկրում և գլխաւորապէս Փոքր-Ասիայում, և վերադառնալուց յետոյ Պետերբուրգում կարգաց մի շարք դասախօսութիւններ կնոջ դրութեան մասին արեւելքում: Ապա պ. Նիխեիլի իր դասախօսութիւնները սկսեց տալագրել Պետերբուրգի «Сѣверный Вѣстникъ» համարելի ամսագրի այս տարվայ համարներում: Այդ ամսագրի № 10-ի մէջ տպված է Նիխեիլի դասախօսութեան և այն մասը ևս, որը վերաբերում է հայ կանանց:

Մեր յօդուածի սահմանները թոյլ չեն տալիս մեզ առաջ բերել \*) յարգելի ճանապարհորդի

\*) Լաւ կը լինէր, եթէ մեր թարգմանիչները թարգմանէին պ. Նիխեիլի գրութեան արեւելի կնոջ մասին: Գա աւելի չնորհապարտեան արժանի աշխատութիւն կը լինէր, քան թէ դանազան անմիտ և առասպելական վէպերի թարգմանութիւնները:







շնորհալի երգչուհու համար. թատրոնի դահլիճը լցնող հասարակությանը արտասովոր ուրախութիւն զգալով նրա երգից, վարձատրեց երգչուհուն ծափահարութիւններով և զերկնախնայութեամբ հնչեց, որ շնորհալի երգչուհին պ. Ֆելդաուի հետ թագու գնալով՝ այնտեղ պէտք է կոնցերտ տան, որից անկասկած կը շտապէր օգտուել Քաղաքի հասարակութիւնը:

Այս օրերս կառավարական բարձրագոյն հիմնարկութիւններէն մէկում, ինչպէս գրում են մայրաքաղաքի լրագիրներէն, քննվելու է բարձրագոյն և միջնակարգ դպրոցներում սովորող հրէաներին վերաբերեալ կանոններ հարցը:

Հոկտեմբերի 30-ին, երաժշտական ընկերութեան դահլիճում Ներսիսեան դպրոցի ուսուցիչ պ. Քարաման կարգաց հայերէն լեզուով մի դասախօսութիւն վէպի մասին: Բացատրելով գեղեցիկ, ճշմարիտ և բարի գաղափարը, և խօսելով բանաստեղծութեան ծագման մասին, դասախօսը անցաւ վիպական բանաստեղծութեան և դրա տեսակներին: Հայկական ժողովրդական վէպի վրա դասախօսը առանձին ուշադրութիւն դարձրեց, մասնաւոր շեշտելով թէ որոնք են դրա նմանները հայոց հին գրականութեան և օրինակներ բերելով Արաբական դարից, խորհրդացուց և Մարտիրոսի: Մի բաւական երկար հայեցող զոյգով հայոց հին կեանքի այն երկոյնները վրա, որոնք նկատ են առկա մեր վէպին, դասախօսը մի քանի նմանութիւններ անելով յունաց վէպի հետ, վերջացրեց իր ասելով: Պ. Քարաման բաւական յարմար ձայն և բաւական լաւ առողջանութիւն ունի դասախօսելու համար և այդ կողմից լաւ տպաւորութիւն թողեց, բայց տարաբարդաբար դասախօսութեան նիւթը ունկնդիրներին առանձին հետաքրքրութիւն չը պատճառեց, իսկ նրա ընդհանրապէս բարձր ոճը մատչելի չէր դահլիճում խմբակ հասարակութեան մի նշանաւոր մասին: Չը պէտք է մոռանալ, որ բազմաթիւ ունկնդիրներ առաջ աշդուրեցեամբ դասախօսելու առաջին պայմանը—պարզ և մատչելի լեզուն է: Ուրախալի է, որ երաժշտական ընկերութեան փոքրիկ դահլիճը լի էր հասարակութեամբ, որովհետեւ դասախօսութեան արդիւնքը յատկացրած է Հայուհեաց Բարեգործական ընկերութեան և, ինչպէս երևում է, ընկերութեան վարչութեան անդամները ոչինչ հոգացողութիւն չեն խնայել տոմարները ցրելու համար: Մեզ թվում է, որ թիֆլիսի հայոց ընկերութիւնները չէին սխալվել, եթէ նոյն իսկ իրանց դրամական օգտի համար մի քանի դասախօսութիւններ կազմէին, աշխատելով որ դասախօսութիւնները նիւթը աւելի հետաքրքրի և աւելի ժամանակակից բնաւորութիւն ունենար:

Ներքին հայուհին իր հետ վերցնում է իր դուռը և մի քիչ բաժնակ կամ բուրդ: Մինչև որ նրան դուռը կը կանչեն, մինչև որ դուռը կը դադարաւորը (որը թրքական սովորութեամբ շատ է շտապով չէ լինում) նա մանուկ կամ գործում է: \*) Շատ անգամ պատահել է տեսնել Հայաստանում, թէ ինչպէս հայ կանայք գալիս էին եկեղեցի ձեռքներին զանազան ձեռագործ ունենալով, որով նրանք դադարում էին մինչև ժամանացութեան սկսվելը: Այդպիսով, կարելի է կատարելապէս համաձայնել յիշեալ հեղինակի (Սթրուսի) այն խօսքերի հետ, որ «Արիւն խորհրդում, կտրված լինելով քաղաքակրթված աշխարհից, աշխատանքի հայ ժողովուրդը իր ձեռով դարձնելով նրան ամենալաւ դարձարանը կնոջ համար: Մինչև որ հայ-տղամարդը միշտ հողում է հարստութիւն ձեռք բերելու և խնայելու համար, հայ կնոջ վրա է ընկնում տան ներքին բարեկարգութեան մասին հոգալը և տնտեսութեան բարեկարգութիւնը: Չարմանալի չէ ուրեմն, որ ընտանեկան կեանքը շատ դարձաւ հայերի մօտ, և արեւելի բոլոր ազգերի մէջ մեծ չեւեռ ձանաչում մի ուրիշ ազգ, որի մէջ այնքան լաւ կազմակերպված լինէր ընտանեկան և այսքան ամուր դիրք ունենար կնոջ, իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի է ասել, որ հայը ամենաբնորոշ ամուսինն է արեւելքում:

Մարդկային աշխատանքներում և շնորք ունենալով հայուհին չի ընկնում Մինչևեռ թրքական, պարսիկ կնոջ, կամ արաբական իր մարդու հարեմից դուռը, օրինակի համար այլիցս ժամանակ, սովորաբար ոչ մի բանի ձեռք դարձել չէ կարողանում, հայուհին, ընդհակառակը, այնպիսի դիրք է բռնում, որ կարողանում է ոտի կանգնեցնել մի ամբողջ հայ ընտանիքը:

Հայուհու աշխատանքներում մինչև անգամ առակ է դարձել արեւելքում. թրքական յայտնի առակ կայ, որ ասում է «հայուհին նման է անընդհատ պտտող անիւին», և թուրքերի կողմից հեգնութեամբ գործածվող այդ առակը իսկապէս ամենալաւ գովասանք է հայ կնոջ համար, որը ոչ մի բանից անկողնից աշխատանքի միայն չէ կարող Մինչև անգամ ճանապարհորդելիս, էջի կամ ջորու վրա նստած ժամանակը, հայուհին գործում կամ մանում է: Գիտե՞ք, մի որ և է գործի համար հայ կնոջ՝ դատարան են կանչում. իմանալով, որ այնտեղ բաւական ժամանակ պէտք է

«РУССКІЯ ВѢДОМОСТИ» լրագրին Պետերբուրգի հեռագրում են, որ պետական խորհրդի առաջին կայ նստաշրջանում ի միջի այլոց հերթին են սպասում հետեւեալ օրինագծերը. 1) պետական հիմնարկութիւնները բեֆօրմը, 2) անցագրերի կանոնադրութիւնը, 3) բեֆօրմների հաստատութիւնը, 4) Սիբիրում նոր վարչութեան հաստատութիւնը, 5) ինսպեկտոր արկիւնների նոր կանոնները, 6) անանկութեան վերաբերեալ նոր օրինագծերը, 7) առեւտրական նաւահանգիստների շինելը և 8) Չեքոսլովակիա—Ավստրիայի միացումը գաղութականութիւնների հաստատութիւնը:

«Волжск. Вѣстн.» լրագիրը խօսելով Նիմֆ-Նովոգորոդի տնտեսական մասին, ասում է, որ ղեկավար այս քաղաքի առեւտրը աւելի լաւ էր, քան թէ անցեալ տարի: Ղզարից բերված է 6,000 տակառ, որ ծախվեց 2 ր. 30 կ.—4 րուբլի վերջին. սպիրտ բերված է 5,000 վերջին 550—700-ը, ասորիճանը ծախվում էր 12—15 կոպ.: Լաւ ծախվեցան նոյնպէս Շամախու և Ղրաւստանի գինիները:

Հոկտեմբերի 30-ին, անդրկովկասեան երկաթուղու առաւօտեան դնացքով թիֆլիս վերադարձաւ Արիստակէս Կալիսկոպոս Սեդրակեան:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 22 հոկտեմբերի  
Այժմ մեր գործերը պիտի կարենան կանոնաւոր շրջանակի մէջ մտնել: Անդհան խորհի Պատրիարք հոկտեմբերի 19-ի կէսօրէն յետոյ այլ ևս կատարելապէս Պատրիարք եղաւ:—Նոյն օրը ըրաւ իր երդումն, առանց որու չէր կարող պաշտօն վարել. Պատրիարքը Պոլիս հասաւ հոկտեմբերի 17-ի երկուշաբթի երեկոյն, յաջորդ օրը յոգնութիւն առնելու օր էր, և միանգամայն Ազգ. Ժողովի հրաւիրագրերը պիտի զրկուէին: Ժողովի գումարման հրաւերն չորեքշաբթի առաւօտ ժամը 4-ին (գրեթէ 9) զրկվեցաւ, բայց ատենը բացուեցաւ 5-ին (գրեթէ 10<sup>1</sup>/<sub>2</sub>):

Ժողովը գումարեցաւ Մայր եկեղեցւոյ Մայր-Տաճարին մէջ, առաջին բաղմութիւն ժողովուրդի զբաւած էր եկեղեցին. ազգային բոլոր երեսփոխանը գրեթէ ամեն ալ ներկայ էին. եկեղեցւոյ դուռը յատկացեալ էր մասնաւոր հրաւիրեց, որոց մէջ էր Նիկոմիդիայ ազգայիններու պատգամաւորութիւնը: Դիւանին հանդէպ դուռն էին երկու պատրիարքական աթոռներ, մին Նորուստի միւսը Պոլսոյ Պատրիարքին: Ատենը բացաւ Ատենապետ պ. Թիւրքեան, ծանոթ թէ կայսրը

կորցնի, հայուհին իր հետ վերցնում է իր դուռը և մի քիչ բաժնակ կամ բուրդ: Մինչև որ նրան դուռը կը կանչեն, մինչև որ դուռը կը դադարաւորը (որը թրքական սովորութեամբ շատ է շտապով չէ լինում) նա մանուկ կամ գործում է: \*) Շատ անգամ պատահել է տեսնել Հայաստանում, թէ ինչպէս հայ կանայք գալիս էին եկեղեցի ձեռքներին զանազան ձեռագործ ունենալով, որով նրանք դադարում էին մինչև ժամանացութեան սկսվելը: Այդպիսով, կարելի է կատարելապէս համաձայնել յիշեալ հեղինակի (Սթրուսի) այն խօսքերի հետ, որ «Արիւն խորհրդում, կտրված լինելով քաղաքակրթված աշխարհից, աշխատանքի հայ ժողովուրդը իր ձեռով դարձնելով նրան ամենալաւ դարձարանը կնոջ համար: Մինչև որ հայ-տղամարդը միշտ հողում է հարստութիւն ձեռք բերելու և խնայելու համար, հայ կնոջ վրա է ընկնում տան ներքին բարեկարգութեան մասին հոգալը և տնտեսութեան բարեկարգութիւնը: Չարմանալի չէ ուրեմն, որ ընտանեկան կեանքը շատ դարձաւ հայերի մօտ, և արեւելի բոլոր ազգերի մէջ մեծ չեւեռ ձանաչում մի ուրիշ ազգ, որի մէջ այնքան լաւ կազմակերպված լինէր ընտանեկան և այսքան ամուր դիրք ունենար կնոջ, իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի է ասել, որ հայը ամենաբնորոշ ամուսինն է արեւելքում:

Մարդկային իրաւունքներով օգտվելու կողմից հայ կնոջ, կարելի է ասել, աւելի ազատ է քան թէ արեւելքի կանայք, չը բաց առնելով և Արա-

\*) Экономическое положение Турецких Армян, Г. Ариуни.

վաւերացուցած ըլլալով Տ. Խորէն Պատրիարքի ընտրութիւնը, Նորին Սրբազնութիւնը Պոլիս եկած է արդէն ազգային պաշտօնական մարմիններու հրաւերով. կարգաց այս առթիւ դատական գործոց նախարարի թեղեւ էր, վաւերացումը ծանուցանող, և առաջարկեց որ Ազգ. Ժողովը կողմանէ հրաւիրակներ Պատրիարքարան երթաւ: Նորին Սրբազնութիւնը հրաւիրեց ՍԱԳ. Ժողովը: Նիկեացական և աշխարհական պատգամաւորութիւնը գնաց ի Պատրիարքարան: Մինչև նոր Պատրիարքի գալն արդէն Նորուստի մի Տ. Գարուսի Պատրիարք եկած և աթոռը բացման էր:

Տաւր վայրկեան յետոյ Տ. Խորէն Պատրիարք եկաւ. թէպէտ չուզեց իր Պատրիարքական Աթոռը բացման ուխտը չընել առաջ, բայց ուրիշ աթոռ չը կար և Հայրիկ որ անոր քոյն էր, աթոռին վրա նստեցուց. արդէն քիչ ժամանակի խօսք էր: Պ. Ատենապետը, զեղեցիկ բանախօսութեամբ մը, անդունց նորոշեց Պատրիարքն յանուն Թիւրքիոյ հայոց, և թողով իւր աթոռը տարաւ Սահմանադրութիւնը յանձնեց Ս. Պատրիարքին, հրաւիրելով զնա իր երդումն ընել: Որքի կանգնեցաւ Պատրիարքը, ինչպէս նաև բոլոր ժողովականը, ամենը երեսին դարձաւ զէպի Մայր-խորանը, որու վարագոյրը բացուեցաւ. նոյն պահուն և Պատրիարքը յուզեալ ձայնով հետեւեալ կերպով ուխտն ըրաւ, Սահմանադրութեան 4-րդ յօդուածը:

«Առաջի Աստուծոյ և ի ներկայութեամբ Ազգային Ժողովոյ» հրապարակաւ կուրսեմ հաւատարիմ մնալ տէրութեան և ազգին և ճշմարտապէս հետևել Ազգային Սահմանադրութեան անձնի զօրծաղրութեանը:

Վարագոյրը փակեցաւ. Պատրիարքն ալ բոլորովին հանդիսու կերպով բազմեցաւ իւր Աթոռին վրայ և արտասանեց բերանացի բանախօսութիւն մը, որուն օրինակը «Արեւելք» կը խրկեմ:

Այդ բանախօսութիւնը լաւ տպաւորութիւն մը թողուց: Պատրիարքը կը յայտնէր այնպիսի գաղափարներ որք կրնան մինչև աստիճան մը համարձակ համարուի. տէր Խորէն Պատրիարք վաւերացած ըլլալով առանձնացեալ կեանք մը, առիթ չէ ունեցած անուղղի, երկիւղի մէջ մնալ, ուստի շատ պարզութեամբ կը յայտնէ իւր գաղափարները, և տեսալ մը պնդանքներով կը կողմնակիցեցայ տալ թէ կարծածին չափ վանական չէ: Պատրիարքի բանախօսութիւնը գործելու ծրագիր մը կրնանք համարել, բաւական է որ ղինքը չը չուարեցնեն Տ. Խորէն Պատրիարք չեւեց այն կէտին վրայ թէ առանձնաշնորհաբար լիկ շնորհներ չեն, այլ եկեղեցւոյ ապրելու պայմաններն են, և միանգամայն փոխարինութիւններ քրիստոնէից մատուցած ծառայութիւններու, վերջապէս հասկցուց թէ իրաւունք է և ոչ ողորմութիւն Պատ-

րիարքի անապատի աղատ աղջիկը: Սակայն այդ աղատութիւնը աւելի աղջկանն է տրված, քան թէ մարդու գնացած կնոջ: Աղջիկ կամ կին գընաւ ու ծախվել, կամ կանանց գերի առնել երբեք գոյութիւն չէ ունեցել Հայաստանում. հայ աղջիկը չը գիտէ թէ ինչ է երեսի ծածկոց, ինչ է հարեմ, որոնք տիրապետում են հայերին շրջապատող ազգերի մէջ: Հայաստանի աղջիկը ինչպէս անապատի բեղուն, ամեն տեղ գնում է ազատօրէն և բաց, չը ծածկելով երեսը. նա կարող է դիմել զանազան հարցերով մինչև իսկ օտար տղամարդոց. կարող է մասնակցել ընդհանուր խաղերի և խօսակցութիւններին և մինչև անգամ պարբերի և երգերի մէջ, որոնց իսկապէս անկողն շատ են սիրում հայուհիները:

Արտաքին կողմից հայուհիները արդարացի կերպով հռչակված են արեւելքում իրանց զեղեցկութեամբ: Թխաբոյն թաւեայ մորթը, սև մազերը, և մեծ սև ու փայլուն աչքերը, որոնք կամարակալված են խիտ յօնքերով և երկար արտաճանքներով, յաճախ մեծ քիթը և շրթունքները մի առանձին գեղեցկութիւն են տալիս հայուհու զեղեցկութեանը: Սակայն այդ իր տեսակի գեղեցկութիւնը տարաբարադարձաբար շատ շուտ է թաւաճում, և զեմքի բոլոր գծերը մի քանի տարուց յետոյ չեն կարողանում նոյն իսկ հասկացողութիւն տալ նախկին գեղեցկութեան մասին: 16—18 տարեկան զեղեցիկ հայուհին, շատ անգամ արդէն 24—26 տարեկան հասակում այնպիսի զեմք է ստանում, որը գոյի է մինչև իսկ դրաւի լինելուց: Հայ գեղեցկուհիները զանազան վում են իրանց թաւաճող լինելով, որը երևում է նոյն իսկ զեմքի վրա, բուսնելով բաւական

րիարքը շատ ներութեամբ անխաղճ նաև հաւատարիմ հպատակ մնալու պայմաններու մասին: Այս երկու կէտերը աւելի քաղաքական կէտեր կրնան համարուի: Իսկ ներքին խնդիրներու մասին գծեց տխուր պատկեր մը այն վիճակին յուրում կը գտնուի մեր եկեղեցին: Ժողովուրդներն ամէն ուրեք անհօտ, անհովիւ, վաթառն թեւ առանց առաջնորդի գրեթէ, այսքանը կը բաւէ իրանց վիճակին վրայ գաղափար տալու: Խօսեցաւ Սահմանադրութեան վերաբնութեան հարցի վրայ:

Բայց ինչ որ մեզ համար նորութիւն էր այդ օրն Պատրիարքին կրօնասիրական խօսքերն էին. Աստուած, Գրիտոս, եկեղեցի, կրօն, ի վաղուց մոռցուաց բառեր, ամենքն ալ յիշեցուց Պատրիարքը, բայց ոչ կեղծ կերպով, այլ հաւատացեալ ջերմութեամբ և Պատրիարքը, և ինչ որ կրնէր սըրտէն կըսէր, և մեծ յոյս ունիւք որ հայոց համար քրիստոնէական վերածնութիւն առաջ պիտի բերէ Տ. Խորէն Պատրիարքը:

Ուշադրութեան արժանի կէտ էր այն խորին յարգանքը, զոր Պատրիարքը կը յայտնէր վեհափառ Կաթողիկոսին համար. իր ամեն մէկ խօսքին մէջ յայտնի կընէր թէ որքան կը յարգէ եկեղեցական նուիրապետութիւնը: Ինքն պատասխանատու կը համարի ինքզինքն առաջի վեհ. Կաթողիկոսին:

Վերջապէս ինչ երկարեմ, լաւ տպաւորութեան մը տակ մնացին, միայն սահմանադրութեան վերաբերեալ խնդիրներն մեզ մտառանջութիւն կը պատճառեն, և կը յուսանք թէ այդ խնդիրն ապագային չը յուղուի:

Տ. Խորէն Պատրիարքը կրնայ բարձրահասակ համարուի, զեղեցիկ գլուխ մը ունի, փառաւոր միւրուք մը որ գրեթէ սպիտակացած է, թէպէտ ինքն հազիւ 50-ի հասնի, աչքերը անուշ են, և կըրթուած, ուսումն անոնց անձին մը արդաւանքաւորութեան զրօյնը կը կրէ: Մաղթենք որ մեզ մոռցնել տայ վերջի տարիներն, և այս էջերուն մէջ միայն նորա դրուագները զրկու. բազմ ունենանք և ոչ թէ դարձեալ Պատրիարքը պարսաւելու վիշտն զգանք:

Տ. Խորէն Պատրիարքը վերջ խօսեցաւ Նորուստի մի Պատրիարքն. ինքն ալ իր հրաժեշտը կուտար վառն գի քիչ ատենին պիտի մեկնի Պոլսէն. խօսեցաւ իւր Պատրիարքութեան պաշտօնավարութեան վրայ, բաւ թէ շատ դանդաղ ժամանակի մէջ պաշտօն վարեց. իւր խղճի պարտականութիւնը կատարեց և շնորհակալ եղաւ Ազգ. Ժողովոյ որ ղինքն Պատրիարք Նորուստի մի ընտրած էր:

Այդ բանախօսութիւնէն վերջ Տ. Գարուսի Պատրիարք իր ձեռքով Տ. Խորէն Պատրիարքին տուաւ Պոլսոյ Պատրիարքութեան Ասան, դաւադանք: Հին ժամանակը սովորութիւն էր որ հրաժարող Պատրիարքը իւր յաջորդին կը յանձնէր

զգալի կերպով բնիկներ և մօրուսի տեղերում. հայուհիներին այդ յատկութիւնը բոլորովին դուր չէ գալիս հարեմներում, որոնք կնոջ վրայ հաւատում է իր մօրթու քնքրութեամբ: Այդ պատճառով հայուհիները, ինչպէս և վրացի աղջիկները, շատ անգամ, և աւելի քան ուրիշները, ենթարկվել են ծանր տանջանքների, երբ նրանց մարմինը բոլոր մասերից բարբառաբար պղծում են մաղերը,—մի բարբառաւորութիւն, որը գործադրում էր, և ինչպէս ասում են այժմ էլ գործադրվում է արեւելքի մի քանի հարեմներում. հայուհիներին այդ արտաքին սիրտնութիւնը աւելի է մեծանում նրանց ազգային տարբերակ հազուադէպ շնորհով, որը նրանք այժմ իրենք են զեն դեցուած: Կապկութիւնը ոչ մի ազգին չէ սազում: Ինչու է ազգային սովորութեամբ գեղեցիկ և զոյնզոյն կերպով հաճեցված հայուհին իր սիրուն չորերը փոխում է եւրոպական զգեստի, այն էլ միայն այն պատճառով, որ դա կարված է և la franca: Բայց ինչպէս մեր կուլտուրային երկրներում մոզան ուղք չէ դարձնում ոչ ճաշակի և ոչ էլ տեղական սովորութիւնները վրա, այնպէս էլ Հայաստանում տղամարդը չորերի մէջ փոխութիւն մտցնելուց յետոյ, փոփոխութիւններ են մտցնում և կանանց չորերի մէջ: Հայուհիները կրում են իրանց չորերի վրա շատ դրամներ, որոնցով դարձաւորում են ոչ թէ միայն իրանց թաւաճելու և մաղերը, այլ և պարանոցը, կուրծքը և ձեռքերը: Գեղեցիկ չորը, մի յայտնի աստիճանի կուլտուրական հետ, որը յատուկ է հայուհիներին, այլ և նրանց հազնվելու շնորքը, աւելի դրաւի են դարձնում Հայաստանի աղջիկներն:

(Կը շարունակվի)



Ասան, բայց Յակովբոս Պատրիարքէն վերջ օր- վան կռիւները դադարեցուն այս սովորութիւն- նը և թերեւս ուրիշ պատճառներ ալ ըլլային: Այժմ Տ. Յարութիւն Պատրիարք վերանորոգեց զայն: Բայց կարծենք թէ այդ սովորութիւնը կա- րելի չէ հաստատ պահել:

Նուրբան էֆէնդիի առաջարկութեամբ Աղգ- ժողովը ոտքի վրայ կանգնած շնորհակալու- թիւն յայտնեց Տ. Յարութիւն Պատրիարքին նորա պաշտօնավարութեան մասին: Մեր երեսփոխան- ներու սիրտը բուռն է, զգացման տպաւորութեան ներքե կը մնան ինչ և է:

Յետոյ Տեղապահին հրաժարականը և անոր ալ շնորհակալութիւն, ու նիստը փակուեցաւ: Գեղե- ցիկ օդ կար, գեղեցիկ օր էր, գեղեցիկ տպաւո- րութիւնն մնաց ամենուն վրայ, աղղային ուրա- խութեան օրեր մաղթեցինք իրարու:

Անդադար շնորհաւորութիւններ կընդունի Պատ- րիարքը ամեն կարգի աղղայիններէ: Զնորհա- ւորութեան գնաց նաև Մեղիսիայէ սրբա- դան, հռոմէական-հայոց Պատրիարքի կողմէն, և այլն և այլն: Կը կարծենք թէ նոր Պատրիարքը միայն և- պիտիտու է և արեւելահայաստանի աստիճա- նը չունի, և անշուշտ վեհ. կաթողիկոսը պէտք եղածը կը անօրինէ:

Երուսաղէմի Պատուոց համար կըսուի թէ կար- զադրուած է ապահով կերպով. կառավարութիւ- նը այս օրերս յանձնած է 370,000 ռուբլի մօտ գումար մը. թէպէտ նիւթական դրամ չէ, բայց ապահով թուղթեր են գանձուելու, որով Երու- սաղէմ կարգաւ իր 400,000 ռուբլի պարտքէն: —Աստուած նորէ տայ, նորէն խնդացնէ:

«Մանդուկ» լրագիրը վերստին խախտվեցաւ. եպարքոսական հրամանաւ. Հռոմայ չեմ գիտեր ինչ բանի վրայ խօսելով գործածած է արտա- կան բացատրութիւն մը որ միայն իսլամաց կը- րօնական գործոց համար կը գործածուի եղեր, իբր նուիրական բառ մը:

Հայկակ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբիական մի քանի դիմադրական լրագիր- ներ թերահաւատութեամբ են վերաբերում զէպի կառավարութեան նախագծերը, որոնց նպատակն է վերադննել սահմանադրութիւնը:

—Բալգարիայի աղղային ժողովը արդէն բաց- ված է, և ինչպէս երևում է հէնց սկզբի տեղե- կութիւններէ, շատ բուռն և աղմկալի պէտք է լինի: Կուսակցութիւնների մրցումը կըրբ է հասել, և հէնց առաջին ժողովում տեղի ունեցան փո- թորակի տեսարաններ:

—Լուր էր տարածվել, որ գերմանացոց վի- ճելմ կայսրը մտադիր է Լժնու գնալ: Այժմ, ինչ- պէս հեռագրում են Բերլինից, այդ լուրը կիսա- պաշտօնապէս հերքվում է:

—Անխորժ մի լուր են հաղորդում Էլզաս-Լո- թարինգիայից. այնտեղ տեղաւորված զօրքի թիւը պէտք է մեծացնուի դերմանական կառավարու- թեան կարգադրութեան համեմատ: Այդ տեսակ կարգադրութիւն ի հարկէ նոր կասկածներ կարող է յարուցանել Ֆրանսիայում:

—Արեւելեան Աֆրիկայի հարցը, որ սպառնում էր նոր զգոնութիւններ յարուցանել Անգլիայի և Գերմանիայի մէջ, այժմ աւելի սուր կերպա- րանք է ստանում: Մարիկի Սալբերի յայտնեց այս օրերս, որ արեւելեան Աֆրիկայի հարցում Անգլիան չէ կարող համերաշխութեամբ գործել Գերմանիայի հետ:

—Լժնուից հաղորդում են, որ այնտեղ վերջին ժամանակներս առանձին ուղադրութիւն է դարձ- րած այն դեռապատճառով վրա, որի գումարով- լու նպատակն է որոշել արեւելեան Աֆրիկայում ճորտեր վաճառելու հարցը, և արգելքներ դնել այդ ամօթալի գործին: Սակայն կասկածում են, որ այդ բանը չի աշտովի, զլուսադրապէս այն պատճառով, որ այժմ Գերմանիայի և Անգլիայի յարաբերութիւնները բարեկամական չեն, և անդ- լիական կառավարութիւնը հասարակաց կարծիքի յանդիմանութեան չենթարկուելու համար, ստիպ- ված է համերաշխ չը լինել Բելմարի կառավա- րութեան հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՍՕՖԻՍ, 28 նոյեմբերի: Աղղային ժողովի ա- ռաջին նիստը աղմկալի էր. Գերմանիոյ դարձա- Ստամբուլում մի հարցով այն վատ վարկեցո- ղութեան պատճառով, որին ենթարկվել են խորհուրդ և Օլչեվ՝ բանտում եղած ժամանակ: Որովհետեւ այդ հարցը մնաց առանց պատասխա- նի, ուստի նախկին միջնորդ խմբակ մի երկար ճառ ասաց, որի մէջ թեւեւ կառավարութեան բոլոր սխալները և անեց, որ Բալգարիան կը կործանվի, եթէ գործերը կը շարունակվեն ըն- թեանալ նոր կարգով: Խմբակի մի ճառը ընդուն- վից ընդդիմադրականները կողմից բուռն համա- կրական բացահայտութիւններով: Ստամբուլի յայտնեց, որ հռոմեացի միայն անկարգութիւն է ուղղում առաջ բերել: Ամբողջ ընդդիմադրական կուսակցութիւնը կատաղի բողոքներ յայտնեց այդ խօսքերի դէմ, բայց և այնպէս ժողովը անցաւ հերթական հարցերին: Ընդդիմադրական կուսակ- ցութիւնը բողոքեց այդպիսի ճնշման դէմ:

ԼՕՆԻՕՆ, 29 հոկտեմբերի: Լօրդ-մէրի մօտ տե- ղի ունեցած բանկետում Սալբերի յայտնեց, որ Ազգայնականութեամբ ապստամբութիւնը դադարեց- րած է և Անգլիան առիթ չունի վախճանալու առ- զանական նենգութիւններէ: Երբեք անոր վերա- բերմամբ Սալբերի հասկանալ տուեց, որ անդ- լիական դրաման ժամանակամիջոցը դեռ եւ ո- ռոշվել չէ կարող: Եւրոպայի ընդհանուր դրու- թեան մասին միջնորդը ասեց, որ բոլոր պետու- թիւնները հաստատապէս խաղաղութիւն են ցան- կանում, և որ ամեն տեղ տեղի ունեցող սպառնալիքները չեն թուլացնում անդլիա- կան կառավարութեան յոյսերը խաղաղութիւն պահպանելու վերաբերութեամբ. բայց և այնպէս միջոցներ են պէտք, որպէս զի Անգլիան ան- պատրաստ դրութեան մէջ չը գտնվի:

ՓԱՐԻՉ, 29 հոկտեմբերի: Սահմանադրութեան վերադննելու յանձնաժողովը վճռեց, որ հիմ- նադրական ժողովի մէկամ սահմանադրութիւնը պէտք է հաստատվի ժողովրդի կողմից:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 հոկտեմբերի: Այսօր Պետերբուրգ- հասաւ Ներքին գործերի մինիստրը Այսօր Թագա- ժառանգ Յեսարելիչը ուղևորվեց Գանիա, Ֆլիգել- ժառանգան կուս Զուլալովի ուղեկցութեամբ: «Грѣхъ давинъ» հաղորդում է, որ բաժնատերնե- րի վերաբերեալ նախագծի քննութիւնը պետա- կան խորհրդում կը սկսվի, հաւանականաբար, նոյեմբերի 17-ին:

ՀԻՄՆ, 30 հոկտեմբերի: Ռուսաց լրագոր խմբու- սիւն երէկ պապը ընդունեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ

Հոկտեմբերի 28-ին

|                                                            |          |
|------------------------------------------------------------|----------|
| Լժնուի վրա 10 ֆունտ արծեւ . . . . .                        | 95 ր. 25 |
| Համբարձի վրա 100 մարկ . . . . .                            | 47 > —   |
| Փարիզի վրա 100 ֆրանկ . . . . .                             | 37 > 55  |
| Ռալի . . . . . արծեւ . . . . .                             | 7 > 68   |
| Մաքսային կուպոններ . . . . .                               | 152 > —  |
| Արծաթ . . . . .                                            | 1 > 18   |
| Բորսային դիսկոնտներ . . . . .                              | 7 և 80/0 |
| Պետական 5% 1-ին շրջանի . . . . .                           | 97 > 87  |
| — — — — — 2-րդ . . . . .                                   | 97 > 87  |
| — — — — — 3-րդ . . . . .                                   | 97 > 25  |
| — — — — — 4-րդ . . . . .                                   | 97 > 25  |
| — — — — — 5-րդ . . . . .                                   | 97 > 25  |
| — — — — — 6-րդ . . . . .                                   | — > —    |
| Նոր 40/0 փոխառութիւն . . . . .                             | 82 > 37  |
| Արեւելեան 50/0 փոխառութիւն 1-ին շրջ. . . . .               | 97 > 25  |
| — — — — — 2-րդ . . . . .                                   | 97 > 12  |
| — — — — — 3-րդ . . . . .                                   | 97 > 25  |
| Ներքին 50/0 առաջին փոխառութիւն . . . . .                   | 269 > —  |
| — — — — — 2-րդ . . . . .                                   | 241 > 50 |
| 51/2% րէնտա . . . . .                                      | 101 > 50 |
| Ռսկեայ րէնտա . . . . .                                     | 177 > —  |
| Եթեթերոք կոնսոլիդաց փոխառու- թիւն . . . . .                | 146 > —  |
| Նոր երկաթուղային րէնտա . . . . .                           | 97 > 50  |
| 50/0 գրաւական թղթերի կառուած. փոխ. կրեդ. ընկ. մետ. . . . . | — > —    |
| — — — — — թղթային . . . . .                                | 91 > 62  |
| Գրաւ. թղ. Ազն. բանկի . . . . .                             | 96 > 75  |
| 51/2% գրաւական թղթերի խորհրդի կառուած բանկի . . . . .      | 97 > 50  |
| 60/0 գրաւակ. թղ. Խաղիովի կալ. բան. . . . .                 | 99 > 87  |
| — — — — — Պոլտավայի . . . . .                              | 100 > —  |
| — — — — — Պետ. Զուլայի . . . . .                           | 100 > —  |
| — — — — — Երեւելի . . . . .                                | 100 > 50 |
| — — — — — Մոսկովայի . . . . .                              | 99 > 50  |
| — — — — — Բաւարաց. Զալի . . . . .                          | 99 > 50  |
| — — — — — Նիւթ. Սամար. . . . .                             | 100 > —  |

|                                                 |         |
|-------------------------------------------------|---------|
| — — — — — Վիենայի . . . . .                     | 99 > —  |
| — — — — — Թիֆլիսի—72 և — տ. . . . .             | 97 > 50 |
| — — — — — Փուլթայի—18 և — տ. . . . .            | 97 > —  |
| Վճռված-կանխի բանկի ակցիաները 672 > 50           |         |
| Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 241 > —        |         |
| Բերլին-Քոլոգովի ընկ. . . . .                    | 83 > —  |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ- զացիաներ. . . . . | 93 > —  |

|                                                    |         |
|----------------------------------------------------|---------|
| Մոսկովայի քաղաք. օրվիցախաներ . . . . .             | 92 > —  |
| Օդէսայի . . . . .                                  | 92 > 12 |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. . . . .             | — > —   |
| Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը շատ ամուր է: |         |

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՈՐՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Խմբարհաւար խնդրում է ընկերութեան պ.պ. անդամներին շնորհ բերել արտաքոյ կար- գի նիստին, որ կայանալու է 6-ին նոյեմբերի 12 ժամին պ. Եսայի փիթոյկանի տանը, Նազօրնայա փողոցի վրա: 1—2

ВЪ ГЛАВНОМЪ СКЛА ДѢ ЖИРАРДОВСКИХЪ МАНУ ФАКТУРЪ

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐՆԵՐԻ ԳԼԽԱՌ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Դժբեղացա փողոցում, նախկին Արծրունի քաղաքապետի նոր ստացվել են պատ- րաստ ԲՐԵՋԵՆՏԵՐ Հետեւեալ չափերի. 2 1/2 x 3, 3 x 4, 3 x 5, 3 x 6 4 x 5, 4 x 6, 5 x 7.

ԳՕՆԵՆԻ Լ ԼԵՑՑ 1—10

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԿՕԼԴ-ԿՐԵՄ

Կաշին փափկացնող բոլոր գործածական միջոցներից յայտնվում է իր թարմութեամբ և իր բաղադրութեամբ: Կաշիում է դաւաճեցնում բոլոր նշանաւոր վաճառականների մօտ, իսկ Մոսկովայում Բ. ԿԵՕԼԵՐԻ Ե ԸՆԿ. մօտ, Նիկոլայա փողոցում: № 9. П. К. О. (3—3)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄԻԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերթոյնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ դեռեղվում է Լօրկո և ընկ. տպարանը)

Պատու ունեւ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ եւ նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեց իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ: Գործարանի կառավարութիւնը եւ յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԵԻ մի ՊՐՈԿԻԶՕՐԻ, որ փորձառու թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեւ մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հաշակաւոր ՖԻԼՏՐՈՐ, որը միակ է, որ այնուրեքամբ մաքրում է ջրերը կապա- րից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրոկիզօրը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Զնորհով այն օ- ժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական բիւրոյի ծիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէտերեան, մեղային և զազային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱ- ԿԱԿԱՆ ԲՈՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻՅԻՆ, ԷՄԻՆ, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, Լու- ժոգական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կա- նօններին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշա- կաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դե- րազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա- նակ պարանախելով իրանց մէջ ամբաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա- խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւսնող կաղնուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ եւ միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք- րութեան մէջ և վերաբերվել զէպի գործաւ ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ: Տարածայնութիւններից խուսափելու համար, խմորահաւար խնդրում եմ իմ ջրերի գործածող- րին պահանջել որ իմ բոլոր արգիւնները կրնն իմ ֆիլտրայի նշանակել, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

41—50 (ե)

ՄՇԱԿԱՆ ՍՊԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ ՏԵՂ ԸՆՏՐԵՒՈՒ ՎԵՐԱԵՐԻՄԱՐ ԹԻՖԼԻՍԻ քաղա- քային վարչութեան մէջ կազմված ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ հրաւիրում է այն անձանց, որոնք կը ցանկանան քաղաքին տալ իրանց պատկանած գետինը վերոյիշեալ նպատակի հա- մար, յայտնել այդ մասին զրաւոր կերպով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, որո- շակի յայտնելով թէ որտեղ է գտնվում գետինը, նրա տարածութիւնը և զինք: Գետինը պէտք է գտնվի Կուրի ընթացքի մօտ, աջ ափին, Միքղեօվի գործարանի ետեւը, իսկ ձախ ափին Լինէյնի կոչված գորանոցներից ներքե: Ցայտարարութիւնները կընդունվեն մինչև 1888 թվի նոյեմբերի 15-ը: 2—2

ՎԻԵՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ВѢНСКІЙ МАГАЗИНЪ

ԵՂ.Ր. Վ. Լ. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԳԵԱՆՆԵՐԻ

Գօշովինակի պրօսպեկտի վրա, Միլիանի տանը, առաջին կիսիկական զինմադրայի գիմոյ Դ Ե Պ Օ

Մարդկանց և երեխայոց պատրաստի հագուստների: Ստացել ենք մօտ օրերս զանազան յայտնի և նշանաւոր գործարաններից մեծ քա- նակութեամբ աշխատային և ձմերային ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՈՏՆԵՐ ամենալիւրջին ձեւի: Գները ամենամատչելի և ձեռնտու են:

II ՊԱՀԵՍՏԸ գտնվում է եղբ. Արովեանների տանը № 1, 2, 3 և 4, Ալեքսանդրեան պող. գիմոյ:

Եղբ. Վ. Լ. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԳԵԱՆՆԵՐԻ